ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ը «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում ավագ դպրոցներում բնագիտական առարկաների լաբորատորիաների կահավորման համար անհրաժեշտ կահույքի տեխնիկական հատկորոշիչների մշակման նպատակով հայտարարում է անհատ փորձագետի ընտրության մրցույթ:

Տվյալ խորհրդատվական ծառայությունը ներառում է հետևյալ աշխատանքները.

- Ուսումնասիրել համապատասխան ոլորտում միջազգային փորձը,
- Ծանոթանալ տվյալ ծրագրով դպրոցների համար ձեռք բերվող լաբորատոր սարքավորումների ցանկին,
- Ծանոթանալ լաբորատոր սարքավորումների տեխնիկական հատկորոշիչները մշակող անհատ խորհրդատուների կողմից առաջարկված կահավորման իրատեսական մոդելները համապատասխան լաբորատոր սարքավորման համար,
- Մշակել տվյալ բնագիտական առարկայի համար մեկ լաբորատորիայի կահավորման անհրաժեշտ կահույքի տեխնիկական հատկորոշիչները՝ ելնելով դպրոցներում առկա և ԿԲ ծրագրով ձեռքբերման ենթակա սարքավորումների ցանկից:
- Մշակել գնման ենթակա կահույքի ցանկերն ու սահմանել պահանջվող քանակները,
- Կատարել շուկայի ուսումնասիրություն, կազմել նախահաշիվներ,
- Աջակցել մրցույթի գնահատման հանձնաժողովին՝ հայտերի գնահատման գործընթացում,
- Աջակցել դպրոցներին՝ ստացված կահույքի տեխնիկական հատկորոշիչների համապատասխանության ստուգման գործընթացում:

Դիմող թեկնածուները պետք է բավարարեն փորձի և որակավորման հետևյալ պահանջները.

- Թեկնածուի ընդհանուր որակավորումը.
  - բարձրագույն տեխնիկական կրթություն
  - անգլերենի իմացությունը կհամարվի առավելություն

- Թեկնածուի ընդհանուր աշխատանքային փորձը
  - Առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ

- Թեկնածուի աշխատանքային փորձը համապատասխան ոլորտում
  - կահույքի տեխնիկական բնութագրերի/հատկորոշիչների մշակման փորձ

Անհատ խորհրդատուի գնահատումը կիրականացվի հետևյալ կերպ.

- ընդհանուր որակավորումը – առավելագույնը 30 միավոր
- ընդհանուր աշխատանքային փորձը - առավելագույնը 30 միավոր
- աշխատանքային փորձը համապատասխան ոլորտում - առավելագույնը 40 միավոր

Դիմող թեկնածուն դիմումին կից պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

- ինքնակենսագրական տվյալներ (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը:
- Կրթությունը հիմնավորող փաստաթղթեր:

Համապատասխան փորձ ունեցող մասնագետները կարող են դիմել աշխատանքային օրերին «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ՝ ք. Երևան, Ս. Վրացյան փող. 73 հասցեով, (էլ. փոստ. cfep@arminco.com) մինչև դեկտեմբերի 27, 2016թ., ժամը 17:00-ն:
Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոհիշյալ հասցեով կամ (010)57-56-90(61) հեռախոսահամարով:

ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն»

ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վրացյան 73

Դիմող՝ _____

Հեռ. _____

Էլ. Փոստ _____

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել ավագ դպրոցներում բնագիտական առարկաների լաբորատորիաների կահավորման համար անհրաժեշտ կահույքի տեխնիկական հատկորոշիչների մշակման նպատակով փորձագետի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ տվյալներ իմ աշխատանքային փորձի և կրթության մասին:

Դիմող՝ _____ /_____/

(ստորագրություն)

«____» _____ 2016 թ.